



COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Երրորդ բաժանմունք

Որոշում

«Էներգիա» Արտադրողների կոոպերատիվի կողմից

ընդդեմ Հայաստանի ներկայացված
թիվ 31769/04
գանգատի

ընդունելիության վերաբերյալ¹

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք), իր՝ 2004 թ. դեկտեմբերի 9-ի նիստի ընթացքում, Պալատ ի հետևյալ կազմով.

Պրն. Բ.Ս. Ջուլյանչիչ, *Նախագահ*
Պրն. Յ. Յեդիգան,
Պրն. Լ. Կաֆլիչ,
Պրն.Ս. Բերսան,
Տկն. Ա. Գյուլունյան,
Տկն. Ռ. Յեզեր,

1 Սույն որոշման թարգմանությունը ոչ պաշտոնական է և կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության ռեսուրսներով: Իրավական ուղեցույցը, Ծրագրի իրականացման շրջանակներում համագործակցության և կատարած ներդրումների համար, ցանկանում է երախտիքի խոսք ասել սույն հաշվետվության թարգմանիչ, Իրավական ուղեցույցի իրավական հարցերով փորձնակ Լուսինե Հակոբյանին ([Այստեղ տեղադրված են տեղեկություններ Լուսինե Հակոբյանի և Իրավական ուղեցույցի իրավական հարցերով այլ փորձնակների մասին](#)):

Մասնագիտական խմբագիր՝ Նարինե Գասպարյան, «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության նախագահ:

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

«Էներգիա» Արտադրողների կոոպերատիվն ընդդեմ Հայաստանի
գործով որոշումը

*Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից*

Պրն. Ե. Միեր, *դատավորներ*,
և պրն. Մ. Վիլլիգեր, Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,
քննության առնելով 2004 թ. հունիսի 3-ին ներկայացված
վերոհիշյալ գանգատը՝ կայացրեց հետևյալ որոշումը.

Փաստերը

Դիմումատուն՝ «Էներգիա» Արտադրողների կոոպերատիվը,
մասնավոր շինարարական ընկերություն է՝ հիմնադրված 1986 թ.-
ին: Ընկերության գտնվելու վայրն է Հայաստանի Վեդի քաղաքը:
Դիմումատու ընկերությունը դատարանում ներկայացված էր իր
տնօրեն պրն. Համլետ Հովսեփյանի կողմից:

Ա. Գործի հանգամանքները

Գործի հանգամանքները, այնպես ինչպես դրանք ներկայացրել է
դիմումատուն, կարելի է ամփոփել հետևյալ կերպ՝
Կոնկրետ չմատնանշված օրը Դիմումատու ընկերությունը հայց է
ներկայացրել մեկ այլ մասնավոր ընկերության դեմ՝
հայտարարելով, որ վերջինս չի կատարել իր պայմանագրային
պարտավորությունները և պահանջելով իր կողմից կրած վնասների
հատուցում:

2002 թ. ապրիլի 1-ին ՀՀ տնտեսական դատարանը մերժել է
դիմումատու ընկերության հայցը՝ անհիմն լինելու
պատճառաբանությամբ: Հիշյալ վճիռը տասնհինգ օրվա
ընթացքում կարող էր բողոքարկվել:

Քանի որ վճիռը չի բողոքարկվել, հետևաբար մտել է օրինական
ուժի մեջ:

2002 թ. ապրիլի 26-ին Կոնվենցիան ուժի մեջ է մտել
Հայաստանի համար:

2004 թ. փետրվարի 2-ին հատուկ արտոնագիր ունեցող
փաստաբանը դիմումատու ընկերության անունից վճռաբեկ բողոք
ներկայացրեց ՀՀ վճռաբեկ դատարան՝ փորձելով հասնել
դատավճռի վերանայմանը նոր երևան եկած հանգամանքների
հիմքով: Որպես նոր երևան եկած հանգամանք՝ փաստաբանը
ներկայացրել է անկախ փորձագետի կողմից 2003 թ. սեպտեմբերի
17-ին կազմած փորձագիտական կարծիքը:

2004 թ. փետրվարի 27-ին վճռաբեկ դատարանը բողոքը թողել է
առանց բավարարման՝ եզրակացնելով, որ բերված ապացույցները

«Էներգիա» Արտադրողների կոոպերատիվն ընդդեմ Հայաստանի գործով որոշումը

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

չեն կարող դիտվել որպես տվյալ գործի համար էական նշանակություն ունեցող նոր երևան եկած հանգամանք:

Բ. Համապատասխան ներպետական օրենսդրությունը

1999 թ. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221.4-րդ հոդվածն սահմանում է, որ տնտեսական դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակելուց 15 օր հետո:

Համաձայն 222-րդ, 223-րդ և 224-րդ հոդվածների՝ Տնտեսական դատարանի՝ ուժի մեջ մտած օրինական վճիռները կարող են վերանայվել վճռաբեկության կարգով՝ Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազի կամ վերջինիս տեղակալների կամ էլ հատուկ արտոնագիր ունեցող և վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանի բողոքների հիման վրա: Խնդրո առարկա բողոքները քննության են առնվում վճռաբեկ դատարանի կողմից:

225-րդ հոդվածը սահմանում է, որ վճռաբեկ բողոք բերելու համար հիմք են [գործին մասնակցող անձանց] նյութական և դատավարական իրավունքի խախտումը կամ նոր երևան եկած հանգամանքները: Նոր երևան եկած հանգամանքների հիմքով վճռաբեկ բողոք ներկայացնելու համար ժամկետային սահմանափակում չկա:

Համաձայն 228-րդ հոդվածի՝ դատական ակտի վերանայում հնարավոր է նոր երևան եկած այնպիսի հանգամանքների հիմքով, որոնք էական նշանակություն ունեն գործի համար, որոնք հայտնի չեն եղել կամ չէին կարող հայտնի լինել կողմերին կամ որոնք հայտնի են եղել կողմերին, սակայն հիմնավոր պատճառներով չեն ներկայացվել դատարան:

Համաձայն 235-րդ և 236-րդ հոդվածների՝ վճռաբեկ դատարանը վերանայում է վճիռները՝ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում: Դատարանը կարող է կամ առանց բավարարման թողնել բողոքը կամ վճիռն ամբողջովին կամ դրա մի մասը բեկանել և գործն ուղղարկել նոր քննության:

ԳԱՆԳԱՏԸ

Դիմումատու կազմակերպությունը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն, բողոքում էր, որ դատական վարույթները արդար չեն եղել, քանի որ ինչպես տնտեսական դատարանը, այնպես էլ՝

«Էներգիա» Արտադրողների կոոպերատիվն ընդդեմ Հայաստանի գործով որոշումը

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

վճռաբեկ դատարանը պատշաճ կերպով չեն գնահատել իրենց ներկայացված փաստերն ու ապացույցները:

Օրենքը

Դիմումատու ընկերությունը բողոքում էր անարդարացի դատաքննության դեմ և վկայակոչում 6-րդ հոդվածը, որի համապատասխան մասն ամրագրում է, որ.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... դատարանի կողմից ... արդարացի դատաքննության իրավունք»:

ա) Ինչ վերաբերում է տնտեսական դատարանում գործի քննությանը, Դատարանն առաջին հերթին անհրաժեշտ է համարում պարզել, թե արդյոք վճռաբեկ դատարանի 2004 թ. փետրվարի 27-ի վճիռը կարելի է վերջնական համարել այս գործով՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով: Այս առնչությամբ Դատարանը հիշեցնում է, որ գործը վերանայելու մասին բողոքը 35-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով որպես կանոն, չի կարող հաշվի առնվել (տե՛ս օրինակ՝ Էրիկսոնն ընդդեմ Շվեդիայի, թիվ 31721/96, Որոշումը, 21.5.97թ.): Դատարանը որևէ առանձնահատուկ հանգամանքներ չի պարզել խնդրո առարկա գործի շրջանակներում, որոնք կարդարացնեին ընդհանուր կանոնից շեղումը: Հետևաբար, դիմումատու ընկերության պահանջների վերաբերյալ վերջնական վճիռը տնտեսական դատարանի 2002 թ. ապրիլի 1-ի վճիռն է:

Այս կապակցությամբ Դատարանը հիշեցնում է, որ համաձայն միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող նորմերի՝ Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրի համար Կոնվենցիայի նորմերը կիրառելի են միայն այն փաստերի նկատմամբ, որոնք տվյալ Կողմի համար առկա են եղել նրա նկատմամբ կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո (տե՛ս, օրինակ, Յովանովիչն ընդդեմ Խորվաթիայի գործը (որոշում), թիվ. 59109/00, ՄԻԵԴ 2002-III): Դատարանը մատնանշում է, որ Հայաստանը վավերացրել է կոնվենցիան 2002 թ. ապրիլի 26-ին: Հետևաբար, Դատարանն իրավասու չէ քննության առնելու սույն գանգատն, այնքանով, որքանով վերջինս վերաբերում է տնտեսական դատարանի վճռին, քանի որ վճիռը կայացվել է նշված ամսաթվից առաջ:

«Էներգիա» Արտադրողների կոոպերատիվն ընդդեմ Հայաստանի գործով որոշումը

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

Այստեղից հետևում է, որ գանգատի այս մասը 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով *ratione temporis* չի համապատասխանում Կոնվենցիայի դրույթներին, և ենթակա է մերժման՝ համաձայն 35-րդ հոդվածի 4-րդ մասի:

բ) Ինչ վերաբերում է դիմումատու ընկերության՝ վճռաբեկ դատարանում գործի քննության վերաբերյալ բողոքին, Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիան գործի վերանայման մասին դրույթ չի պարունակում և որ 6-րդ հոդվածը չի վերաբերում այն դատաքննությանը, որը կորոշի, թե արդյոք գործը ենթակա է վերանայման, թե՛ ոչ (տե՛ս, օրինակ, Միխալիկովան ընդդեմ Սլովակիայի գործը, թիվ 48818/99, Որոշում 11.12.01թ.). Չնայած Հայաստանի ներպետական օրենսդրության համաձայն գործի վերանայման մասին դիմումը պաշտոնապես կոչվում է «վճռաբեկ բողոք», այն, ըստ էության, որևէ կերպ չի տարբերվում վերանայման մասին խնդրանքից:

Այստեղից հետևում է, որ գանգատի այս մասը 35 րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով *atione materiae* չի համապատասխանում Կոնվենցիայի դրույթներին և ենթակա է մերժման՝ համաձայն 35 – րդ հոդվածի 4-րդ մասի:

Հիշատակված պատճառներից ելնելով՝ Դատարանը միաձայն

Հայտարարում է գանգատն անընդունելի:

Մարկ Վիլլիգեր
Քարտուղարի տեղակալ

Բոստյան Ս. Ջուլյանչիչ
Նախագահ